նման, թանձր մի մշուշի մէջ, ուր լուսինը ճառագայթներ է մաղում, ուր լաւ է ապրել, որովհետեւ ամէն ինչ մոռացութիւն է, քաղցր յիշատակ եւ անվերջանալի սանդուղների վրայից բարձրացող անզգալի մի լինելութիւն:

Ժամադրութիւններ քաղաքի հեռաւոր թաղամասերում: Ծերունի ծառայի բերած տոմսակները: Շքեղ պալատի մօտ ժամերով քայլելը եւ մարմար ժամի նշանին սպասելը՝ ծածուկ ներս մտնելու համար: Եւ այնտեղ, լայն սոֆայի վրայ, ծանր մետաքսէ վարագոյրներով ծածկուած սենեակում, գգուանքների եւ համբոյրների կօկայինը, հրաբուխային տենչանքը, արդիլուած եւ վտանգաւոր սիրոյ հաճոյքը...

Վախ, որ ամէն բոպէ կարող են մտնել, ու սպասումը առաւօտեան առաջին լոյսին, կամաց, միշտ նոյն հաւատարիմ ծերունու առաջնորդութեամբ, դուրս գնալու համար եւ ժամերով ման դալու լաղունայի ափին՝ ուր բիւրեղ է ծփում եւ որտեղից սփռտնած դէմքիս վրայ սառը հով է փչում եւ անհասկանալի մի մելամաղձոտութիւն:

Ոտքերիս տակ արորուող մի հեքեաթ էր փռուել: Վենետիկը կլանում էր ինձ հարբեցուցիչ թոյնի նման՝ վտանգաւոր, մահացուցիչ, երբ մի օր, հրապարակի անկիւնում դիմացս կանգ առաւ հայ այն աղջիկը, որի հետ ճամբորդած էինք միասին:

— Դուք, դեռ այստե՞ղ էք:

— Այո, օրիորդ, իսկ դուք, ո՞րտեղից էք գալիս:

— Հոմ, Ֆիլենցէ, յետոյ դիւղում...

Իր մոխրագոյն մեծ աչքերի մէջ փափուկ, թաւշեայ եւ միեւնոյն ժամանակ վառվռուն մի լոյս էր պտտում: Զայնը երախայական մի ինչ որ պարզութիւն ունէր՝ անկեղծ, մտերիմ եւ հմայիչ: Ինչպէս ատ տօթ չօրերին մարդ փնտռում է երիտասարդ անտառի զով մի անկիւնը, ես ընագդօրէն փարեցի նրան:

Պիացետտայի վրայ արեւը եւ մարմարները լուսաւոր մի խալի էին փռել: Սուրբ Մարկոսի նիշերի մէջ աղաւնիները ոսկի էին կլցնում:

Լուռօրէն, կրկնուող արձագանգներին սպասողների նման, մենք քալեցինք:

Տաք օր էր:

(Շարունակելի)

ԵՐԵՔ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.— ԲԱՂՆԻՒԻ ՄԸ ԴՈՒՌԻՆ ՀԱՄԱՐ

Դո՜ւռ, բացուէ՛ լոկ անոնց առջեւ, որոնց հոգին
Ցոլացումն է մարմիններու մէջ գեղեցիկ
Ծաղիկներուն ու ծովերուն եւ լուսնակին.
Մուր եփենոսդ ելլայ բիւրեղ մը թափանցիկ
Անոնց համար, որոնք ջուրին ծիծաղներուն
Կը բերեն զոյգ նուռեր իրենց կուրծքին վրայ,
Ու լայն կողեր, որոնց տակ սէրը սարսռուն
Արեւազօծ իր ջերմութեան մէջ կը հեւայ...

Բ.— ՊԱՐՏԷԶԻ ՄԸ ԴՈՒՌԻՆ ՀԱՄԱՐ

Կը բացուիմ ես անոնց առջեւ որ պիտի գան
Գիտնալով որ վարդերը շուտ կը թառամին,
Կը փշրուի հայելիի պէս լուսընկան.
Սոսկ մբրուր է բաժակին մէջ կարմիր գինին.
Անոնց առջեւ որ կը հիւսեն ծաղիկներէս,
Միակ օրուան մը պրսակով բուրումնաւէտ,
Երջանկութիւնն իրենց հնչուն երգի մը պէս
Որ կը լռէ արդէն կոտրա՞ծ բիւրեղին հետ...

Գ.— ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄԸ ԴՈՒՌԻՆ ՀԱՄԱՐ

Երբ գիս հրբես կուրծքի մը պէս եղբայրական,
Պիտի բացուիմ նամբայ տալով խոնջ ոտքերուդ,
Դէպի ճրագի մը հրաւէրը. լուսընկան
Երբ աղբիւրին մէջ նուռնուփար մըն է կապոյտ,
Կամ երբ արեւը շուշան մ'է բոսորագոյն
Ծաղկած ամէն ոստի վրայ, ամէն շիւղի,
Պիտի բացուիմ լուռ մատեանի մ'էջին հանգոյն,
Ուր մատներէդ կը մընայ հետք մը ոսկի...

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան